



Մշակվել է Սևան համայնքի երիտասարդական քաղաքականության ստեղծման նախաձեռնող խմբի կողմից՝ համայնքի մասնակցությամբ

## ՍԵՎԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009 – 2012 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Չափորոշիչն ըստ քաղաքականության	Գործողություն	Ժամկետներ	Ներգրավված կողմեր	Գնահատման չափորոշիչներ
<p>1. Երիտասարդության համար և նրանց կողմից ուեցած պատկերացումները հասարակության ապագայի մասին</p>	<p>1.1. Երիտասարդական քաղաքականության մասին ինֆորմացիայի տարածում /քաղականության տպագրում, տարածում համայնքում, քաղականության լուսաբանում, մասնավորապես թերթերով, հեռուստատեսությամբ, սեմինարների, կայք էջերի, էլ. հաղորդագրությունների միջոցով/:</p>	<p>2009-2012թթ.</p>	<p>Երիտասարդներ, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ ԶԶ Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարություն, դոնոր համայնք</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Զոր հասարակություն հիմնադրամի միջոցով տպագրվել է Սևանի երիտասարդական քաղաքականությունը և կից գործողությունների պլանը 2009-2012թթ. համար, որը տարածվել է համայնքում</li> <li>- ՁԼՍ-ների միջոցով լուսաբանվել է Երիտասարդական քաղաքականությունը (կազմակերպվել են հեռուստառադիո քննարկումներ, տպագրվել են հարցազրույցներ, բացատրական քննարկումներ)</li> <li>- համացանցում առկա է քաղաքականության և գործողությունների պլանի էլեկտրոնային տարբերակները:</li> </ul>
	<p>1.2. Երիտասարդների ներգրավվածություն պետական Երիտասարդական քաղաքականության քննարկումներին և իրականացմանը, փաստաթղթի վերաբերյալ առաջարկների ուղարկում ԶԶ Սպորտի և Երիտասարդության հարցերի նախարարություն</p>	<p>2009-2010թթ.</p>	<p>Երիտասարդներ, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ԶԶ Սպորտի և Երիտասարդության հարցերի</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Համայնքի ներկայացուցիչները մասնակցել են պետական Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ կազմակերպված քննարկումներին և/կամ համապատասխան մարմիններին են ներկայացրել փաստաթղթի դրույթների վերաբերյալ իրենց առաջարկները:</li> </ul>

			նախարարություն	
	1.3. Մասնակցություն ավագանու նիստերին և բյուջեի կազման գործընթացին	2010-2012թթ.	Երիտասարդներ, ավագանի, համայնքապետարան, երիտասարդական խնդիրներով զբաղվող կազմակերպություններ	Համայնքի երիտասարդությունը պարբերաբար մասնակցել է ավագանու նիստերին և ակտիվորեն մասնակցել կարևորագույն որոշումների կայացմանը, այդ թվում՝ բյուջեի կազմման գործընթացներին:
2. Տվյալների հենք երիտասարդության վերաբերյալ, երիտասարդական տեղեկատվություն եւ հաղորդակցություն	2.1. Տեղեկատու թերթիկների տպագրում, տարածում, որոնց մեջ կգետեղվեն Երիտասարդական կայք էջերի հասցեներ և Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն:	2010-2012թթ.	Համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Տպագրվել և համայնքում տարածվել է երիտասարդական կայք էջերի հասցեներ և Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն պարունակող տեղեկատու թերթիկներ:
	2.2. «Երիտասարդական ժամ» հաղորդաշարի կազմակերպում տեղական հեռուստաալիքով:	2009-2012թթ.	Լրատվամիջոցներ, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Տեղական հեռուստաալիքով կազմակերպվել և հեռարձակվել է «Երիտասարդական ժամ» հաղորդաշարը:
	2.3. Երիտասարդական պարբերաթերթի հրատարակում կամ տեղական առկա մամուլում երիտասարդներին առնչվող ներդիրների տպագրում:	2009-2012թթ.	Լրատվամիջոցներ, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Ստեղծվել է Երիտասարդական պարբերաթերթ կամ տեղական առկա մամուլում պարբերաբար տպագրվել է երիտասարդներին առնչվող թեմաներով ներդիրներ:
	2.4. Համայնքի երիտասարդության առօրյայի վերաբերյալ ռադիոռեպորտաժների պատրաստում/ հեռարձակում:	2009-2012թթ.	Լրատվամիջոցներ, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Պատրաստվել և/կամ հեռարձակվել են երիտասարդության առօրյայի վերաբերյալ ռադիոռեպորտաժներ համայնքին մատչելի ռադիոալիքներով:
	2.5. Երիտասարդական կայքէջի ստեղծում և/կամ գործող կայքէջերում երիտասարդական առանձին բաժինների ստեղծում և գործարկում:	2009-2012թթ.	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ,	Ստեղծվել և գործարկվել է Երիտասարդական կայքէջ կամ գործող տարբեր կայքէջերում երիտասարդական առանձին բաժիններ են ստեղծվել և գոր-

			համայնքապետարան	ծարկվել:
3. Երիտասարդական ուսումնասիրություններ, լսումներ եւ թեմատիկ հարցումներ Երիտասարդության խնդիրների վերաբերյալ	3.1. Համայնքի ավագանու և երիտասարդության հանդիպումների պարբերաբար կազմակերպում:	2009-2012թթ.	Համայնքապետարան, ավագանի, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Պարբերաբար կազմակերպվել են համայնքի ավագանու և երիտասարդության հանդիպումներ:
	3.2. Կրթական հաստատություններում (ուսումնարան, քոլեջ) տեղադրել արկղիկներ՝ երիտասարդության խնդիրներին վերաբերվող առաջարկների ու նամակների համար:	2009թ.	Երիտասարդներ, համայնքապետարան, կրթական հաստատություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Կրթական հաստատություններում (ուսումնարան, քոլեջ) տեղադրվել են արկղիկներ՝ երիտասարդության խնդիրներին վերաբերվող առաջարկների ու նամակների համար:
	3.3. Կրթական հաստատություններում (ուսումնարան, քոլեջ) տեղի երիտասարդության ուժերով երիտասարդության խնդիրներով զբաղվող հատուկ կառույցների ստեղծում կամ առկա կառույցների ակտիվացում:	2010թ.	Երիտասարդներ, համայնքապետարան, կրթական հաստատություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Կրթական հաստատություններում (ուսումնարան, քոլեջ) ստեղծվել են երիտասարդության խնդիրներով զբաղվող կառույցներ կամ ակտիվացվել են արդեն գոյություն ունեցող նմանատիպ կառույցները:
	3.4. Երիտասարդության խնդիրների և մարտահրավերների վերհանման նպատակով պարբերական հետազոտության կազմակերպում և արդյունքների ամփոփում:	2011-2012թթ.	Երիտասարդներ, համայնքապետարան, կրթական հաստատություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Շահագրգիռ կողմերը իրականացրել են պարբերական հետազոտություններ՝ երիտասարդության խնդիրների և մարտահրավերների վերհանման նպատակով, որոնց արդյունքները բաց են բոլոր ցանկացողների համար:
	3.5. Երիտասարդների շրջանում տարբեր թեմաներով սեմինարների կազմակերպում՝ երիտասարդների իրազեկության բարձրացման, տեղեկատվության տարածման, հավաքման և մոբիլիզացման նպատակով:	2009-2012թթ.	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, համայնքապետարան	Համայնքի երիտասարդության համար կազմակերպվել են տարբեր թեմաներով դասընթացներ և սեմինարներ:
4. Երիտասարդության մասնակցությունը	4.1. Երիտասարդական քաղաքականության իրականացման հանձնաժողովի ձևավորում՝ քաղաքակա-	2009թ.	Ավագանի, Երիտասարդական	Երիտասարդական քաղաքականության 10-րդ կետին համապատասխան ձև-

Ժողովրդավարական բարեփոխումներին եւ կառավարմանը	նութան 10-րդ կետին համապատասխան:		նախաձեռնող խումբ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, համայնքապետարան	վորվել է Երիտասարդական քաղաքականության իրականացման հանձնաժողով:
	4.2. Երիտասարդական քաղաքականության հանձնաժողովի կողմից գործողությունների պլանի վերահսկման և գնահատման իրականացում:	2010-2012թթ.	ԵՔ հանձնաժողով	Երիտասարդական քաղաքականության հանձնաժողովը իրականացրել է գործողությունների պլանի վերահսկման և գնահատման պարբերական գործընթացը:
5. Երիտասարդությունը՝ որպես հասարակությունում նորարարության եւ փոփոխության հիմնական գործոն	5.1. Երիտասարդական նորարարությունների խրախուսման մրցույթների հայտարարում:	2009-2012թթ.	ԵՔ հանձնաժողով, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Երիտասարդական նորարարությունների խրախուսման նպատակով կազմակերպվել են մրցույթներ
	5.2. Անվանակարգերի սահմանում և մրցանակաբաշխություններ:	2009-2012թթ.	ԵՔ հանձնաժողով, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Տարբեր բնագավառներում սահմանվել են անվանակարգեր և կազմակերպվել են մրցանակաբաշխություններ
6. Երիտասարդների ուսուցանում և երիտասարդական աշխատանքի մասնագետների պատրաստում	6.1. Երիտասարդ առաջնորդների ձևավորմանն ուղղված դասընթացների կազմակերպում:	2009-2012թթ.	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Համայնքի երիտասարդության համար կազմակերպվել են առաջնորդության թեմայով դասընթացներ:
	6.2. Երիտասարդական աշխատանք թեմայով դասընթացներ երիտասարդների համար:	2009-2012թթ.	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Համայնքի երիտասարդության համար կազմակերպվել են երիտասարդների հետ աշխատանքի թեմայով դասընթացներ:
7. Երիտասարդական քաղաքականության ոլորտում գնահատման/ պարզեցում	7.1. Համաքաղաքային ամենամյա ստեղծագործական միջոցառումների մրցանակաբաշխության կազմակերպում:	2009-2012թթ.	ԵՔ հանձնաժողով, համայնքապետարան, քաղաքացիական	Նշված բնագավառներում սահմանվել են անվանակարգեր և կազմակերպվել են մրցանակաբաշխություններ

համակարգ	7.2. Մշակույթի ոլորտում մանկապատանեկան և երիտասարդական մրցանակաբաշխություն (նկարչություն, երաժշտություն, պարարվեստ, մինի քատրոններ, անհատ ստեղծագործողներ և այլն):	2009-2012թթ.	հասարակության կազմակերպություններ	
	7.3. Տարբեր ոլորտներում մրցանակաբաշխություններ, որտեղ որպես մրցանակ կծառայեն հետևյալ կոչումները՝ լավագույն ՀԿ, կոչումներ, որոնք կնպաստեն երիտասարդության աշխատանքի աճին, լավագույն լրատվամիջոց, հասարակության սեկտորի հետ լավագույն աշխատող, լավագույն դպրոց, լավագույն կազմակերպություն և այլն:	2009-2012թթ.		
8. Երիտասարդական քաղաքականության և ծրագրերի համակարգում	8.1. ԵՔ հանձնաժողովի կողմից քաղաքականության և սույն գործողությունների պլանի իրականացման կազմակերպում և համակարգում:	2010-2012թթ.	ԵՔ հանձնաժողով	ԵՔ հանձնաժողովը կազմակերպել և համակարգել է քաղաքականության և գործողությունների պլանի իրականացումը տարբեր ծրագրերի միջոցով:
9. Երիտասարդական օրենսդրություն	9.1. Կազմակերպել Սևան համայնքի երիտասարդության մասնակցությունը ՀՀ Երիտասարդության մասին օրենքի նախագծի քննարկումներին, օրենքի վերաբերյալ առաջարկների մշակումը և ներկայացումը համապատասխան մարմիններին	2009թ.	Երիտասարդներ, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Սևան համայնքի երիտասարդությունը մասնակցել է ՀՀ Երիտասարդության մասին օրենքի նախագծի քննարկումներին, մշակել և ներկայացրել է առաջարկներ:
10. Երիտասարդական քաղաքականության բյուջե	10.1. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար Երիտասարդական քաղաքականության գործողությունների ներառում համայնքի բյուջե:	2009-2012թթ.	ԵՔ հանձնաժողով, համայնքապետարան, ավագանի	Ամեն տարի համայնքի բյուջեում գումարներ է նախատեսվել գործողությունների պլանի իրականացման համար:
11. Երիտասարդական քաղաքականության գործողությունների պլան	11.1. ԵՔ հանձնաժողովի կողմից գործողությունների պլանի յուրաքանչյուր քայլի իրականացման ապահովում:	2009-2012թթ.	ԵՔ հանձնաժողով, համայնքապետարան, ավագանի	ԵՔ հանձնաժողովը ապահովել է գործողությունների պլանի յուրաքանչյուր քայլի իրականացումը, մրցույթներ հայտարարելու միջոցով գործողությունների իրականացումը համայնքի բյուջեի միջոցներով տրամադրելու որևէ սուբ-

				յեկտի:
	11.2. ԵՔ հանձնաժողովի և ԵՔՄ նախաձեռնող խմբի համագործակցությամբ Սևան համայնքի յուրաքանչյուր ռազմավարական ծրագրին կից երիտասարդական գործողությունների մոդ պլանի մշակում և ներկայացում ավագանու հաստատմանը:	2011թ.	ԵՔ հանձնաժողով, ԵՔՄ նախաձեռնող խումբ, համայնքապետարան, ավագանի	ԵՔ հանձնաժողովը և ԵՔՄ նախաձեռնող խումբը Սևան համայնքի յուրաքանչյուր ռազմավարական ծրագրին կից մշակել են երիտասարդական գործողությունների մոդ պլան և ներկայացրել ավագանու հաստատմանը:
12. Երիտասարդական քաղաքականության գնահատում և վերաուղղորդում	12.1. Երիտասարդական քաղաքականության գնահատում և վերաուղղորդում՝ յուրաքանչյուր չորս տարին մեկ:	2011թ.	ԵՔ հանձնաժողով, ԵՔՄ նախաձեռնող խումբ, համայնքապետարան, ավագանի	ԵՔ հանձնաժողովը և ԵՔՄ նախաձեռնող խումբը Սևան համայնքի յուրաքանչյուր մոդ ռազմավարական ծրագրի մշակումից առաջ գնահատել են մախորդ տարիների համար մշակված քաղաքականությունը, այնուհետև, վերաուղղորդելով այն մշակել նորը:
13. Երիտասարդական քաղաքականության վերաբերյալ փորձի փոխանակում	13.1. Փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում այլ համայնքների երիտասարդների և երիտասարդական կառույցների հետ Հայաստանում և արտերկրում:	2009-2012թթ.	ԵՔ հանձնաժողով, համայնքապետարան, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	Սևան համայնքի երիտասարդները, երիտասարդական կառույցների ներկայացուցիչները փորձի փոխանակման նպատակով տարբեր այցեր են ունեցել Հայաստանի այլ համայնքներում և արտերկրում:

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինքերնեշնլի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Հզոր հասարակություն հիմնադրամին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինքերնեշնլի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Միացյալ Նահանգների կառավարության կամ ՔՀՀ-ի տեսակետների հետ: